ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/03»

ք.Երևան «04» 08 2022 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Բաշինջաղյան 100 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են 20.06.2022թ.-ից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 70 օրացուցային օր**:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է ԱՅՅԱՆԱԳՐԻՆ գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում 81 736 597 (ութսունմեկ միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ, որից 13 622 766 (տասներեք միլիոն վեց հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը 20.06.2022թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կապալառու կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում (ՀՀ կառավարության 17.06.2022թ. թիվ 913-Ն որոշում):

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դպրական դեպարտամենտ	***«ԱԳԱԹ-777» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01807983
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Ա. Հարությունյան	Տնօրեն՝ Դ. Եսայան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«04» 08 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՍՇՁԲ-22/03 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ

Հազար ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեք	ընդամենը
1	2	3	4		
	Շինարարական աշխատանքներ **Քանդման աշխատանքներ**				
1	Դռների ապամոնտաժում	մ²	49.4	1.500	74.100
2	Դռների շեպերի գաջե սվաղի քանդում	մ²	28.2	0.100	2.823
3	Փայտե պատուհանների տեղահանում /գոգերով/	մ²	302.420	1.500	453.630
4	Պատուհանների շեպերի գաջե սվաղի քանդում	մ²	72.88	0.100	7.288
5	Մանրահատակի քանդում	մ²	866.00	0.400	346.400
6	Կերամիկ սալերից հատակների քանդում	մ²	22.00	0.400	8.800
7	Ներկի մաքրում պատերից	մ²	3690.0	0.150	553.500
8	10սմ հաստությամբ միջնորմների քանդում	մ²	107.0	0.500	53.500

9	20սմ հաստությամբ միջնորմների քանդում դռան բացվածքի համար 3 տեղ	մ²	6.3	0.700	4.410
10	Բետոնե հատակների քանդում սանհանգույցում 20-60սմ հաստությամբ	մ³	7.5	3.000	22.500
11	Մետաղական ճաղավանդակի ապամոնտաժում 21 մ²	մ	21.0	0.200	4.200
12	Մետաղական խողովակների ապամոնտաժում Ø 25 մմ	մ	215.0	0.100	21.500
13	Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	30.0	1.000	30.000
14	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	41.132	8.500	349.625
	Վերանորոգման աշխատանքներ				
	Դռներ, պատուհաններ /1-2 հարկեր/				
15	Վիտրաժե դուռ ալյումինե պրոֆ. 60 մմ հաստ. ջերմակամրջով, ապակեփաթեթով 4 x4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ²	3.42	65.000	222.300
16	նույնը, չբացվող	մ²	5.58	54.000	301.320
17	Վիտրաժե դուռ մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ²	3.40	37.500	127.500
18	նույնը, չբացվող	մ²	5.30	32.500	172.250
19	Դռների տեղադրում ՄԴՖ-ի սալից փայտե շրջանակով, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ /բռնակով, պարակալով և փականով/	մ²	54.80	41.000	2246.800
20	Պատուհանների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4 x4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ²	45.10	37.500	1691.250
21	նույնը, չբացվող	մ²	210.54	32.500	6842.550

22	Պատուհանների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ոչ թափանցիկ ապակեփաթեթով 4 x4 մմ հաստ., սպիտակ գույնի, սանհանգույցում, բացվող	մ²	2.40	37.500	90.000
23	նույնը, չբացվող	մ²	4.32	32.500	140.400
24	Պատուհանների բարդ փականի տեղադրում	հատ	28.00	25.000	700.000
25	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից 20սմ լայնությամբ	մ²	20.5	1.800	36.900
26	Պատուհանագոգի արժեքը 20սմ լայնությամբ	գմ	102.45	3.000	307.350
27	Դռների շեպերի սվաղ գաջե շաղախով	մ²	46.2	4.500	207.900
28	Դռների շեպերի սվաղ ց/ավազե շաղախով	մ²	1.53	3.500	5.355
29	Պատուհանների շեպերի սվաղ գաջե շաղախով	մ²	72	4.500	324.000
30	Պատուհանների շեպերի սվաղ ց/ավազե շաղախով	մ²	38.50	5.500	211.750
	Հատակներ				
31	40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	898.8	3.800	3415.440
32	Կերամիկ սալերից հատակի պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ²	22.4	9.700	217.280
33	Պ/գրանիտե հատակների պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ²	204.90	8.800	1803.120
34	Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով /որ պակաս 8մմ հաստությամբ	մ²	403.40	6.600	2662.440
35	Հատակի իրականացում լինոլիումից	մ²	290.40	4.350	1263.240

	Պատեր				
36	20սմ հաստությամբ գունավոր պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	24.32	10.500	255.360
37	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	95	9.800	931.000
38	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.239	600.000	143.184
39	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ²	238.64	3.900	930.696
40	Պատերի քսահարթում գաջով 10%-ի չափով	մ²	273.10	3.900	1065.090
41	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	2713.0	3.500	9495.500
42	Պատերի լավորակ g/ավազե սվաղ	մ²	78.50	3.800	298.300
43	Պատերի երեսպատում հախճասալով	մ²	78.50	9.500	745.750
44	d=100մմ միջնորմների իրականացում մետաղական կարկասով, երկու կողմից երեսպատված d=12,5մմ գիպսակարտոնե սալերով, ձայնա-ջերմամեկուսիչ հանքային բամբակե շերտով (H=3 մ)	մ²	187.00	9.500	1776.500
45	Դռների կառուցում երկկողմանի լամինացված ՄԴՖ-ով, 18 մմ հաստ.,գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, ալյումինե պրոֆիլներով շրջակապել ՄԴՖ-ի դռների եզրերը / տեղափոխումը, տեղադրումը, փականների և մոնտաժային դետալների հետ միասին ներառված է գնի մեջ/ սանհանգույցում	մ²	3.04	18.000	54.720
46	Միջնորմների կառուցում երկկողմանի լամինացված ՄԴՖ-ով, 18 մմ հաստ.,գույնը համաձայնեցնել պատվիրատուի, հետ ալյումինե պրոֆիլներով շրջակապել ՄԴՖ-ի միջնորմների եզրերը / տեղափոխումը, տեղադրումը, փականների և մոնտաժային դետալների հետ միասին ներառված է գնի մեջ/ սանհանգույցում	մ²	6.200	11.000	68.200
47	Պատերի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ²	542.60	1.200	651.120
	Առաստաղներ				

48	"Armstrong" կամ համարժեք կախովի առաստաղներ սպիտակ գույնի, հիմնակմախքի պատրաստմամբ	մ²	844	6.900	5823.600
	Համաշինարարական աշխատանքներ				
49	Աստիճանավանդակի փայտե բռնաձողերի փոխարինում նորով	մ	40	1.000	40.000
50	Աստիճանավանդակի փայտե բռնաձողերի և մետաղական ճաղավանդակի ներկում	մ²	29.5	1.000	29.500
	Հովիար				
51	Հովիարի մետաղական կառուցվածքների հավաքակցում	տ	0.14	800.000	112.000
52	Մետաղական խողովակ 50 x30x2 մմ	մ	58.7	6.500	381.550
53	Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ներկված մետաղակղմինդրից	մ²	5.100	8.000	40.800
54	Ձևավոր մասերի պատրաստում 0,5մմ հարթ ցինկապատ գունավոր թիթեղից	մ²	0.6	8.000	4.800
	Մուտքի աստիճաններ				
55	Խճի շերտի պատրաստում 7-10սմ հաստությամբ	մ³	2.46	6.000	14.760
56	B-12,5 դասի բետոնով բուտաբետոնե իրականացում	մ³	10.80	32.000	345.600
57	Բետոնի նախապատրաստական շերտ B 15 դասի բետոնից	մ³	16.4	40.000	656.000
58	30մմ հաստությամբ g/ավազե հարթեցնող շերտ	մ²	16.4	1.200	19.680
59	Երեսապատում բազալտե սալերով 30 մմ հաստ.	մ²	16.4	25.000	410.000

60	Մետաղական բազրիքի իրականացում պողպատե խողովակով Ø 50 մմ	մ	15.000	18.000	270.000
61	Մետաղական բազրիքի ներկում	$մ^2$	15.0	0.800	12.000
	Ներքին ջրամատակարարման ցանց				
1	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20x2մմ,լվացումով, քլորացումով ,փորձարկումով	գմ	55	3.000	165.000
2	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25x2,3մմ,լվացումով, քլորացումով ,փորձարկումով	գմ	10	2.000	20.000
3	Փականների տեղադրում Φ15մմ	հատ	5	2.500	12.500
4	Փականների տեղադրում Φ20մմ	հատ	2	2.000	4.000
5	Լվացարանի ծորակի տեղադրում	հատ	2	15.000	30.000
6	Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	1	12.000	12.000
7	Պոլիպրոպիլենային ձրավոր մասեր 20-32մմ	հատ	30	0.100	3.000
8	Անցքերի բացում պատերում L=300մմ	տեղ	6	0.500	3.000
9	Անցքերի բացում միջնապատերում L=300մմ	տեղ	8	0.500	4.000
	Ներքին կոյուղու ցանց				
1	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ50մմ /փորձարկումով/	գմ	30	1.500	45.000
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	10	1.700	17.000

3	Ճուգարանակոնքի տեղադրում	կ-տ	4	68.000	272.000
4	Լվացարանի տեղադրում	կ-տ	2	31.000	62.000
5	Խոհանոցակոնքի տեղադրում	կ-տ	1	36.000	36.000
6	Հոսակի տեղադրում Φ50մմ	հատ	4	1.000	4.000
7	Պոլիվինիքլորիդե անցում D100-50մմ	հատ	4	0.500	2.000
8	Պոլիվինիքլորիդե անցում D50մմ	հատ	5	0.500	2.500
9	Պոլիվինիքլորիդե անցում D100մմ	հատ	6	0.700	4.200
10	Պոլիվինիքլորիդե անկյուն D50մմ	հատ	6	0.500	3.000
11	Պոլիվինիքլորիդե անկյուն D100մմ	հատ	2	0.700	1.400
12	Պոլիվինիքլորիդե քառաբաշխիչ D100մմ	հատ	2	1.000	2.000
13	Հայլելիի տեղադրում 50x80 սմ չափով	հատ	2	4.000	8.000
14	Անցքերի բացում ծածկերում D300մմ	տեղ	2	0.500	1.000
15	Անցքերի բացում միջնապատերում D300մմ	տեղ	2	0.500	1.000
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ				
1	Մետաղական արկղ 600×250 մմ չափերի	հատ	1	12.000	12.000

2	Բաշխիչ վահանակ տեղանոց 18 մոդուլի	հատ	1	32.000	32.000
3	Բաշխիչ վահանակ տեղանոց 10 մոդուլի	հատ	1	24.000	24.000
4	Ավտոմատ անջատիչ 25Ա	հատ	20	3.000	60.000
5	Միաբևեռ վարդակ պատի մեջ տեղադրվող, տուփով	հատ	142	3.600	511.200
6	Անջատիչ մեկ սեղմակով՝ պատի մեջ տեղադրվող, տուփով	հատ	30	3.000	90.000
7	Լեդ լուսատու IP 20/40, 3950K, 4530LM, 36watt, 600x600 մմ	հատ	150	15.000	2250.000
8	Լեդ լուսատու սանհանդույցում 3300LM, 35watt	հատ	8	8.000	64.000
9	ՎՎԳ 4x16մմ պղնձե մալուխի անցկացում	գմ	18	4.000	72.000
10	ՊՊՎԳ 2x4մմ պղնձե մալուխի անցկացում /չհրկիզվող/	գմ	500	1.400	700.000
11	ՊՊՎԳ 2x2,5մմ հատվածքով պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում	գմ	1700	1.200	2040.000
12	ՊՊՎԳ 2x1,5մմ հատվածքով պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում	գմ	1150	1.000	1150.000
13	Լուսարձակիչ ԼԵԴ 500 վտ պաշտպանիչ ցանցով	հատ	4	12.000	48.000
14	Ակոսների փորում պատերում	գմ	1530	0.250	382.500
	Հրդեհային ահազանգման համակարգեր				
1	Պահարան հրդեհային ընդող-ստուգիչ սարք РУБЕЖ-20П	հատ	1	25.000	25.000

2	Անխափան սնուցման աղբյուր РУБЕЖ-NBЭПР 1213,5	հատ	1	53.000	53.000
3	Ակումուլյատորային մարտկոց 7,05 Ա/ժ Ա-12 v	հատ	2	17.500	35.000
4	Հրդեհային ծխային տվիչ ՈՊ 212-64, տեղադրումով	հատ	35	4.000	140.000
5	Ձեռքի ազդարարող հասցեային սարք ՈՊՐ 513-11	հատ	2	2.500	5.000
6	Շչակ ՕՊՕՊ-124-7	հատ	2	6.200	12.400
7	ԿՊՍհԳ-FRLS 1x2x0,75մմ² մալուխի անցկացում	մ	850	0.760	646.000
8	Ամրակ մալուխի	հատ	1500	0.030	45.000
	Դյուբել 2-անոց	հատ	100	0.050	5.000
	Ձեռուցման համակարգի մոնտաժ			9500.000	9500.000
	Ընդամենը				**68113.831**
	ԱԱՀ 20 %				**13622.766**
	Ընդամենը				**81736.597**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«04» 08 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/03 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	20.06.2022թ	70 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		20.06.2022թ	70 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 04 » 08 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/21	Երևան քաղաքի Բաշինջաղյան 100 հասցեում գտնվող վարչական վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	81 736 597	81 736 597	81 736 597	81 736 597	81 736 597	**81 736 597**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2022 թ. կնքված
ԴԴ-ՀՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն